ԴԱՎԻԹ ՍԱՐՈՅԱՆ
ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ
«Երևանի «Հայբուսակ» Համալսարան» իրավագիտության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի՝ մասնավոր և հանրային ամբիոնի դասախոս

ԳԼՈԲԱԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Սույն գիտական հոդվածում հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել և վերլուծության է ենթարկել գլոբալացման և ազգային պետության հետ կապված արդիական հիմնախնդիրները:

Գլոբալացման գործընթացը հանդես է գալիս որպես բազմաշերտ և օբյեկտիվ երևույթ, որը պայմանավորված է համաշխարհային համակարգում տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային փոխկապվածության խորացմամբ: Այն ձևավորում է պետությունների միջև փոխկախվածության նոր մակարդակ՝ նպաստելով միջազգային համագործակցության ընդլայնմանը, սակայն միաժամանակ առաջացնում է լուրջ մարտահրավերներ ազգային պետության համար:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ գլոբալացումը երկակի ազդեցություն ունի. մի կողմից այն խթանում է տնտեսական աճը, տեխնոլոգիական զարգացումը և ինստիտուցիոնալ արդիականացումը, մյուս կողմից՝ սահմանափակում է պետական ինքնիշխանության դասական ընկալումը: Մասնավորապես, միջազգային կազմակերպությունների, վերազգային կառույցների և գլոբալ շուկաների ազդեցության աճը հանգեցնում է պետական ինքնավարության հարաբերական նվազմանը:

Տեսական հարթությունում առանձնանում են երկու հիմնական մոտեցումներ՝ ռեալիստական և ինստիտուցիոնալիստական: Ռեալիստները պնդում են, որ պետությունը շարունակում է մնալ միջազգային հարաբերությունների առանցքային դերակատար՝ առաջնորդվելով սեփական շահերով և իշխանության պահպանման տրամաբանությամբ: Ի հակադրություն՝ ինստիտուցիոնալիստները շեշտում են վերազգային ինստիտուտների դերի աճը և ազգային պետության գործառույթների վերափոխումը գլոբալ կառավարման համակարգում:

Սակայն առավել ամբողջական պատկերացում է տալիս համակարգա-գործառնական մոտեցումը, որի համաձայն՝ ոչ թե պետությունը վերանում է, այլ ադապտացվում է նոր պայմաններին՝ վերաիմաստավորելով իր գործառույթները: Ժամանակակից պետությունը աստիճանաբար վերածվում է «առևտրային պետության», որի առաջնահերթությունները տեղափոխվում են ռազմական ուժից դեպի տնտեսական արդյունավետություն, միջազգային առևտրի զարգացում և գլոբալ շուկաներում մրցունակություն:

Միաժամանակ գլոբալացումը խորացնում է նաև անհավասարությունները պետությունների միջև՝ պայմանավորված տնտեսական ներուժի, տեխնոլոգիական զարգացման և միջազգային ինտեգրման տարբեր մակարդակներով: Արդյունքում ձևավորվում է բևեռացված համակարգ, որտեղ զարգացած պետությունները ստանում են առավելություններ, իսկ զարգացող երկրները հաճախ հայտնվում են կախվածության մեջ:

Այսպիսով, գլոբալացումը ոչ թե վերացնում է ազգային պետությունը, այլ փոխում է նրա բնույթը և դերակատարումը: Այն ստեղծում է ինչպես զարգացման հնարավորություններ, այնպես էլ ինքնիշխանության սահմանափակման ռիսկեր, ինչը պահանջում է հավասարակշռված և ռազմավարական պետական քաղաքականություն:

Հիմնաբառեր- գլոբալացում, միջազգային համագործակցություն, ինքնիշխան իրավունքներ, պետական ինքնիշխանություն, ինքնիշխանության սահմանափակում, մարդու իրավունքներ:

Ներածություն

Ժամանակակից աշխարհում գլոբալացման գործընթացները դարձել են միջազգային հարաբերությունների զարգացման առանցքային գործոններից մեկը՝ էական ազդեցություն ունենալով պետությունների տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային կյանքի վրա: Տեխնոլոգիական առաջընթացը, կապի և տրանսպորտի միջոցների զարգացումը, ինչպես նաև համաշխարհային շուկաների ընդլայնումը նպաստել են պետությունների միջև փոխկապվածության և փոխկախվածության խորացմանը:

Այս պայմաններում ազգային պետությունը բախվում է նոր մարտահրավերների, որոնք վերաբերում են հատկապես պետական ինքնիշխանության, քաղաքական ինքնուրույնության և ազգային շահերի պաշտպանության հարցերին: Գլոբալացման գործընթացները ոչ միայն ընդլայնում են հա-

www.ardaradatutyunjournal.com

մագործակցության հնարավորությունները, այլ նաև առաջացնում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ վերազգային կառույցների ազդեցության աճը, միջազգային նորմերի գերակայությունը և ներքին քաղաքականության վրա արտաքին գործոնների ազդեցության ուժեղացումը:

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ գլոբալացման պայմաններում ազգային պետության դերի վերաիմաստավորումը դարձել է ժամանակակից քաղաքական և իրավական գիտության կարևորագույն խնդիրներից մեկը: Հատկապես փոքր և զարգացող պետությունների համար կարևոր է հասկանալ գլոբալ գործընթացների ազդեցության բնույթը՝ արդյունավետ և հավասարակշռված պետական քաղաքականություն ձևավորելու նպատակով:

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել գլոբալացման էությունը, բացահայտել դրա ազդեցությունը ազգային պետության վրա, ինչպես նաև ներկայացնել ժամանակակից տեսական մոտեցումները՝ գնահատելով դրանց կիրառելիությունը ներկա միջազգային համակարգում:

Հետազոտության մեթոդաբանությունը

Սույն հետազոտության շրջանակում կիրառվել է բազմամեթոդաբանական մոտեցում, որը հնարավորություն է տալիս համակողմանիորեն ուսումնասիրել գլոբալացման և ազգային պետության փոխազդեցության առանձնահատկությունները:

Հետազոտության տեսական հիմքը կազմել են միջազգային հարաբերությունների հիմնական տեսությունները՝ մասնավորապես ռեալիզմը և ինստիտուցիոնալիզմը, որոնք հնարավորություն են տալիս տարբեր տեսանկյուններից գնահատել գլոբալացման ազդեցությունը պետական ինքնիշխանության և պետական գործառույթների վրա: Միաժամանակ կիրառվել է համակարգա-գործառնական մոտեցումը, որի միջոցով ուսումնասիրվել են պետության կառուցվածքային և գործառնական փոփոխությունները գլոբալացման պայմաններում:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ գիտական մեթոդները.

վերլուծական մեթոդ, որի միջոցով կատարվել է տեսական աղբյուրների և գիտական մոտեցումների քննություն, համեմատական մեթոդ, որը թույլ է տվել համադրել տարբեր տեսական դպրոցների (ռեալիստական և ինստիտուցիոնալիստական) դիրքորոշումները, պատմական մեթոդ, որի օգնությամբ դիտարկվել է գլոբալացման գործընթացների ձևավորումն ու զարգացումը, մասնավորապես՝ հետպատերազմական ժամանակաշրջանից սկսած, համակարգային վերլուծություն, որը կիրառվել է գլոբալացման և ազգային պետության փոխկապակցվածության բացահայտման համար՝ որպես ամբողջական և դինամիկ համակարգ:

Մեթոդաբանական հիմքում դրվել է նաև օբյեկտիվության և գիտական չեզոքության սկզբունքը, ինչը հնարավորություն է տվել խուսափել միակողմանի գնահատականներից և ներկայացնել խնդիրը բազմակողմանի վերլուծության ենթարկված ձևով:

Այս մեթոդների համակցված կիրառումը ապահովում է հետազոտության գիտական հիմնավորվածությունը և թույլ է տալիս ձևակերպել համապարփակ եզրակացություններ գլոբալացման պայմաններում ազգային պետության վերափոխման վերաբերյալ:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

«Գլոբալացում» եզրույթը ծագում է ֆրանսերեն «global»՝ «համընդհանուր» բառից: Այս եզրույթով նշվում է համաշխարհային հանրույթի կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ խորացող փոխկապվածության և փոխկախվածության հիման վրա երկրների և ժողովուրդների միջև սկզբունքորեն նոր համաշխարհային համակարգի ձևավորման, գործառնության և զարգացման օբյեկտիվ գործընթացը: Լայն իմաստով գլոբալացման ներքո, մի կողմից, հասկացվում է ազգային և տարածաշրջանային խնդիրների վերածումը համաշխարհային նշանակության խնդիրների, իսկ մյուս կողմից՝ ընդհանուր տնտեսական, սոցիալական և բնական-կենսաբանական միջավայրի ձևավորումը համաշխարհային մասշտաբներում: Նեղ իմաստով գլոբալացումը մեկնաբանվում է տեսական ասպեկտում՝ որպես ազգային, սոցիալական և տնտեսական կառույցների վերածում միասնական և ամբողջական աշխարհասոցիոտնտեսական իրականության:

Անհրաժեշտ է տարբերակել գլոբալացումը և գլոբալիզմը՝ գլոբալիզմի ներքո ընկալելով շուկայի ընդարձակումը վերազգային մենաշնորհների գերակայության պայմաններում, իսկ գլոբալացման ներքո՝ այն գործընթացները, որոնք նպաստում են քաղաքական, տնտեսական և հումանիտար ինստիտուտների համապարփակ զարգացմանը և համարժեք գործունեությանը: Կարծում ենք, որ մեր ժամանակների առանձնահատկությունն այն է, որ գլոբալացումը որոշ չափով հետ է մնում գլոբալիզմից: Բազմաթիվ հեռավոր երկրներում շուկայի ընդարձակումը չի ուղեկցվում գլոբալացման ուղղությամբ համարժեք տեղաշարժերով: Ընդ որում, հակագլոբալիստական շարժման մեջ ներառվում են ոչ միայն ավանդապաշտները, այլ նաև համամարդկային հումանիտար արժեքներ կրող խմբեր, և հաճախ հենց նրանք են գլխավորում այդ շարժումը:

Ըստ մեր տեսանկյան՝ ներկայումս կարևոր խնդիր է ինստիտուտների մշակութային և պետահրավական համապատասխանեցումը ընդլայնվող շուկայի պահանջներին: Քանի որ տնտեսությունը, ինչպես նշում էր դեռևս Կ. Մարքսը «Կոմունիստա-

կան մանիֆեստում», մշտապես ձգտում է հաղթահարել պետական սահմանները, անհրաժեշտ է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի գլոբալացման գործընթացը՝ այսինքն պետահիրավական ինստիտուտների կատարելագործումը, հատկապես միջազգային մակարդակում, հետ չմնա շուկայի ընդարձակման գործընթացներից[1]:

Անհրաժեշտ է նշել, որ ռեալիզմի քաղաքական փիլիսոփայության և ինստիտուցիոնալիզմի ներկայացուցիչները ազգային պետության գործունեության վրա գլոբալացման ազդեցությունը գնահատում են հակադիր դիրքորոշումներից: Ռեալիստները կարծում են, որ գլոբալացված աշխարհում պետությունը շարունակում է հետապնդել իր սեփական շահերն ու նպատակները: «Միջազգային քաղաքականության մեջ, - պնդում է Ն.Սպայկմենը, - թույլատրելի են բռնության բոլոր ձևերը, ներառյալ ագրեսիվ պատերազմները: Դա նշանակում է, որ իշխանության համար պայքարը նույնական է կենսունակության համար պայքարին, իսկ արտաքին և ներքին պետական քաղաքականության գլխավոր խնդիրը իշխանական դիրքերի ամրապնդումն է: Մնացած ամենը երկրորդական է»[2]: Ըստ Ջ. Դոնելլի կարծիքի, գլոբալացված աշխարհում բացակայում է համաշխարհային կառավարությունը, որն էլ կդեկավարեր միջազգային ասպարեզում պետությունների գործունեությունը: «Այդ ասպարեզում կենսունակ մնալու համար, պետությունը պետք է հետապնդի իր սեփական շահերը»[3]:

Ռեալիստները մերժում են գլոբալացման ազդեցությունը պետության իշխանության փոփոխման վրա:

Հակադիր դիրքորոշում են ընդունում ինստիտուցիոնալիստները: Նրանք կանխատեսում են ազգային պետության փոխարինումը զոբալացված աշխարհի տրանսազգային ինստիտուտով: Կ. Օմանը պնդում է, որ գլոբալացման պայմաններում ազգային պետությունը վերածվում է «կարոտախտային գործառույթի»[4]: Ըստ Վ. Ռեյնեկի կարծիքի «գլոբալացումը մարտահրավեր է նետում ազգային պետականության ինքնիշխանությանը»[5]: Ձևավորված միջազգային կազմակերպությունները և ռեժիմները, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունների կողմից միջազգային նորմերի ազգայնացման գործընթացը, հանգեցնում են պետական ինքնավարության էրոզիայի:

Այս գործընթացի ուսումնասիրությանը նվիրված ինստիտուցիոնալիստների հետազոտություններում ընդգծվում է դրա կարևոր հետևանքներից մեկը՝ պետական համակարգի գործառույթների փոփոխությունը[6]: Եթե նախկինում պետական ինստիտուտները ինքնուրույն էին սահմանում տնտեսական և սոցիալական ոլորտներում ազգային արտաքին և ներքին քաղաքականության հիմնական տարրերը և սեփական տարածքում իրականացնում էին սահմանային հսկողություն մարդկանց և ապրանքների շարժի նկատմամբ, ապա ներկայումս ազգային ինքնիշխանության հասկացությունը որոշ չափով տարալուծվում է: Տնտեսական և ռազմական հարաբերություններում առավել հզոր պետությունները ավելի ուժեղ ազդեցություն են ունենում պակաս ազդեցիկ երկրների, ինչպես նաև նրանց արտաքին քաղաքական իրավիճակների վրա: Ժամանակակից աշխարհի գլոբալացման ևս մեկ կարևոր հետևանք է վերազգային (վերպետական) ինստիտուտների ձևավորումը, որոնք միջպետական հարաբերություններին հաղորդում են դաշնային կառուցվածքի տարրեր: Առավել վառ կերպով դա դիտարկվում է Եվրոպական միությունում:

Ռեալիստների և ինստիտուցիոնալիստների դիրքորոշումների ծայրահեղությունների հաղթահարմանը ծառայում է համակարգային-գործառնական մոտեցումը, որը կողմնորոշված է գլոբալացված աշխարհի մարտահրավերներին պետության հարմարեցման գործընթացների[7], ուսումնասիրությանը, ինչպես նաև հանդես է գալիս որպես պետության, իրավունքի զարգացման և մարդկային գործունեության պատմական ամբողջ գործընթացի օբյեկտիվ օրինաչափությունների հետազոտության մեթոդաբանական հիմք՝ հիմնված պատմական և տրամաբանական միասնության սկզբունքների վրա: Այս հարմարեցման ընթացքում տեղի է ունենում պետական իշխանության բնույթի փոփոխություն և պետական գործառույթների վերափոխում: Դիտարկենք գլոբալ տնտեսության պայմաններում պետության գործառույթների և իշխանության փոփոխությունները:

Գլոբալացման գործընթացի նշված արդյունքները արմատներով հասնում են սառը պատերազմի ժամանակաշրջանին, երբ աշխարհը բաժանված էր երկու բևեռների: Այդ շրջանում Արևմտյան Եվրոպայի ազգային պետություններում սկսվեցին տնտեսական, քաղաքական և ռազմական միավորման գործընթացներ, որոնց, ըստ Պ. Վան Համի, նպաստում էին երկու հիմնական գործոններ[8]: Առաջինը՝ Վարշավյան պայմանագրի անդամ պետություններից բխող սպառնալիքն էր, որը եվրոպական երկրներին ստիպեց մի կողմ դնել իրենց պատմական հակասությունները և միավորվել ընդհանուր հակառակորդի դեմ: Երկրորդը՝ Եվրոպական ինտեգրմանը նպաստեց ԱՄՆ-ի հետպատերազմյան գերակայությունը: Խորհրդային սպառնալիքի դիմակայության նպատակով ամերիկացիները էական միջոցներ էին ներդնում Արևմտյան Եվրոպայի երկրների պաշտպանական կարողությունների ամրապնդման մեջ, ինչը հնարավորություն տվեց վերջիններիս զգալի ռեսուրսներ ուղղել տնտեսական զարգացմանը: Հետևաբար, հատկապես արտաքին գործոններն էին նպաստում հետ-

www.ardaradatutyunjournal.com

պատերազմյան Եվրոպայում միջազգային ինտեգրման գործընթացներին:

Հետպատերազմյան Եվրոպայում ձևավորված ինստիտուցիոնալ կառուցվածքի առավել կարևոր հատկանիշներից մեկը պետական տարածքային սահմանների հարաբերական կայունացումն էր: Արևմտաեվրոպական պետությունները այլևս չէին ձգտում սեփական հզորության աճին տարածքային էքսպանսիայի միջոցով, ինչը խզում էր տվյալ տարածաշրջանում ձևավորված պատմական նախորդ միտումները: Նոր ռեժիմների և միջազգային կազմակերպությունների առաջացումը նվազեցրեց ազգային պետությունների կողմից սեփական անվտանգության ապահովման միակողմանի միջոցներին դիմելու անհրաժեշտությունը: Պետությունները սկսեցին իրենց բարեկեցությունը գնահատել առավելապես տնտեսական, այլ ոչ թե աշխարհաքաղաքական չափանիշներով: Եթե երկար ժամանակ պետությունները հիմնականում առաջնորդվում էին տարածքային ընդլայնման քաղաքականությամբ, ապա այս շրջանում նրանք սկսեցին կողմնորոշվել դեպի համաշխարհային ռեսուրսների բաշխման վերահսկողությունը՝ որպես բարեկեցության ապահովման հիմնական միջոց: Ապրանքները աստիճանաբար ձեռք բերեցին ավելի մեծ շարժունակություն, քան կապիտալը և աշխատուժը, ինչը հանգեցրեց առևտրային պետության ծագմանը[9]:

Առևտրային պետությունը օժտված է մի շարք բնութագրիչներով[10]: Առաջինը, այն չի դիտարկում ռազմական հակամարտությունը՝ որպես իշխանության ատրիբուտ: Իշխանության ատրիբուտի որակով ենթադրում է միջազգային առևտուրը: XX դարի կեսերին տնտեսական շահույթ հանդիսանում էր օտար տարածքի զավթումը, քան հարևան տարածաշրջանների հետ ապրանքների առևտրային փոխանակությունից շահույթ ստացող տնտեսական և առևտրային ինստիտուտների ստեղծումը: Ներկայումս բարեկեցության ուժային ապահովման գինը գերազանցում է իր տրամադրած տնտեսական շահույթին: Սպառազինության ժամանակակից տեսակների տարածումը, ինչպիսիք են միջուկայինը, կենսաբանականը, քիմիականը, դրանց վնասող պոտենցիալը մեծ ընդդիմություն է ծնում հասարակության կողմից և հրահրում հասարակությունում ոչ անհրաժեշտ կոնֆլիկտներ: Բացի դրանից, առևտրային պետությունը ազատ շուկայի սկզբունքների, այլ ոչ միայն իր գերշահույթի ստացմանը կողմնորոշված մերկանտիլիստական մոդելի հիման վրա իրականացնում է տնտեսական զարգացում: Այդ իսկ պատճառով այն ջանում է հարմարեցնել տեղական շուկաները և կառույցները միջազգային շուկայի նորմերին:

Եվրոպական շուկայի զարգացումը հանգեցրեց պետական իշխանության լուրջ փոփոխությունների և վերասահմանեց դրա դերը տնտեսական գործընթացներում: Պետական գործառույթներ դարձան ինքնակարգավորվող շուկայի կազմակերպումը և պաշտպանությունը[11]: Լիբերալ դեմոկրատիայի ժամանակ որպես արժեքներ են սպառողի բարեկեցությունը և շուկայի ինքնուրույնությունը, և պետությունը այստեղ աննշան դեր է խաղում: Ժամանակակից պետությանը բնորոշ է մշտական պատասխանատվություն կրել մարդկանց ապրանքներով ապահովման շուկայի սխալների շտկման համար տնտեսական աճին և կայունությանը աջակցման նպատակներով: Այդ իսկ պատճառով առևտրային պետությունում ձևավորվել են տնտեսական և քաղաքական այլ շահեր նախկին ազգային պետությունների հետ համեմատությունում: Ուշադրությունը շեշտադրելով առևտրի, այլ ոչ ուժային էքսպանսիայի վրա, ժամանակակից պետությունն իր ռեսուրսների մեծ հատվածը կողմնորոշում է նոր ապրանքների մշակմանը և արդյունաբերությանը, միջազգային շուկայում նոր դիրքերի գրավմանը: Այն երկրները, որոնք լիարժեք ինտեգրվել են գլոբալ շուկայում, ունեն տնտեսական աճի լավ ցուցանիշներ նույնիսկ բնական ռեսուսների անբավարարության պայմաններում: Օրինակներ կարող են ծառայել՝ Սինգապուրը և Թայվանը: Միաժամանակ գլոբալացման գործընթացի անտեսմանը կողմնորոշված երկրները, անկախ նրանից, բնական ինչ ռեսուրսների են տիրապետում, հայտնվում են համաշխարհային և տնտեսական տարածության սահմանագծում, ինչի օրինակ կարող է հանդիսանալ Խորհրդային Միությունը[12]: Առևտրային պետությունները առավել ունակ են միմյանց հետ համագործակցելու և միջազգային անարխիան սահմանափակող ինստիտուտներ ու ռեժիմներ ձևավորելու: Նրանք նաև շահագրգիռ են գործընկեր երկրների զարգացման և տնտեսական բարեկեցության աջակցման մեջ, քանի որ անմիջական ներդրումներ են կատարում վերջիններիս տնտեսություններում: Հատկապես փոխադարձ ներդրումները միջպետական մակարդակում խթանում են կոպերատիվ տենդենցների զարգացումը: Ընդ որում, այդ կոոպերատիվ տենդենցները արտահայտվում են ոչ միայն միմյանց տնտեսական քաղաքականությունների ներդաշնակեցման փորձերում, այլ նաև այն հանգամանքում, որ առևտրային գործընկեր պետությունները պատրաստակամ են կրել կարճաժամկետ վնասներ՝ մինչև նոր քաղաքական պայմաններին լիարժեք հարմարվելը:

Նման կոոպերատիվ միտումների ծագումը պայմանավորված է երեք գործոնների ազդեցությամբ: Առաջինը՝ առևտրային պետությունը հենվում է բաց միջազգային առևտրային համակարգի վրա, որը բացառում է այնպիսի խոչընդոտներ, ինչպես տարիֆները, քվոտները կամ գնային աջակցությունը, պարտադիր ներառում է առևտրի ազա-

տություն և թափանցիկություն, և երաշխավորում կապիտալի ազատ շարժը: Նման համակարգում պետությունները հնարավորություն են ստանում առանց խոչընդոտների ներդրումներ կատարել: Երկրորդը՝ առևտրային պետությունները ապահովում են անվտանգությունը կոլեկտիվ ջանքերի միջոցով, այլ ոչ բռնության ուղիով: Արևմտյան Եվրոպայի պետությունները վերջին քառասուն տարիների ընթացքում կարողացան էականորեն կրճատել ռազմական ծախսերը, քանի որ դրանք կրում էին ոչ թե առանձին, այլ համաեվրոպական անվտանգության համակարգի շրջանակներում: Երրորդը՝ առևտրային պետությունները ընդունում են, որ փոփոխվող աշխարհում նրանք կարող են ընդունել միջազգային կազմակերպությունների և ռեժիմների որոշակի անտեսման դիրքորոշում առանց իրենց համար տնտեսական և քաղաքական լուրջ կորուստների: Այլ խոսքերով, առանձին պետությունների լիարժեք անկախությունը և գործողությունների ազատությունը ժամանակակից միջազգային քաղաքականությունում բացարձակ անիրական սպասումներ են:

Առևտրային պետությունները սահմանափակված են զարգացող գործընթացում ձևավորված միջազգային հարաբերությունների «հաստատուն» նորմերով: Հաստատուն նորմեր են այն կանոնները, որոնք խախտել կարելի է միայն հատուկ արդարացումների առկայության դեպքում: Նման նորմերի օրինակ կարող են ծառայել «պայմանագիրը միշտ պետք է կատարվի» և «պարտքը միշտ անհրաժեշտ է վերադարձնել» կանոնները: Նորմերը ինքնակամ ընդունվում են փոխհարաբերությունների մասնակիցների կողմից, քանի որ դրանք ընկալվում են որպես նպատակների լավագույն հասնելու միջոցներ: Եթե պետությունները կարծում են, որ որոշակի նպատակների կարող են հասնել ինքնուրույն՝ վճարելով ընդունելի գնով, նրանք խուսափում են նման համակարգում ընդգրկվելուց: Սակայն ակնհայտ է, որ առևտրային հարաբերությունների ռեժիմում պետական ինքնավարության սահմանափակման ընդունման արդյունքում շահերը պետք է զգալիորեն գերակշռեն հնարավոր կորուստները, այլապես նման համակարգը ժամանակակից աշխարհում լայն տարածում չէր ստանա:

Այսպիսով, գլոբալացումը տարածվել է, նախևառաջ՝ տնտեսական ոլորտում, սակայն այն հսկայական ազդեցություն է ունենում նաև համաշխարհային քաղաքականության վրա: Դա արտահայտվում է ինչպես ազգային սահմանների տարալուծման, այնպես էլ տարբեր քաղաքական համակարգերով պետությունների մերձեցման մեջ: Միաժամանակ ուժ են ստանում նաև այլ միտումներ: Նոր տրանսսահմանային տնտեսական կառույցներում կենտրոնացվում են հսկայական ֆինանսական, նյութական և այլ ռեսուրսներ, և նման կառույցները չունեն հավակնություններ, այլ իրենց մասնագիտական (տնտեսական) խնդիրների լուծման համար սկզբում սկսում են ցուցաբերել իշխանության վերարտադրության հավակնություններ: Գլոբալ տնտեսությունում պետությունների ինտեգրումը տեղի է ունենում ոչ հավասարաչափ և հանգեցնում է ըստ տնտեսական հզորության անհավասարության:

Այսպիսով, միջազգային կազմակերպությունների և ռեժիմների տարածումը և ուժեղացումը մարտահրավեր հանդիսացան պետական ինքնիշխանության ավանդական հասկացության համար: Ռեալիստները պնդում են, որ ազգային պետությունը մնում է հարաբերությունների գլոբալ համակարգի գլխավոր մասնակիցը, և միջազգային ինստիտուտները արտահայտում են վերջիններիս կամքը: Ինտերազգայնականները պնդում են, որ միջազգային կազմակերպությունները և ռեժիմները սահմանափակում են ժամանակակից պետությունների ինքնուրույնությունը իրենց գործարքների իրականացման մեջ: Ռեալիստների և պրոցեսուալիստների մոտեցումների ծայրահեղությունների հաղթահարման համար կիրառվում է ավելի լայն համակարգա-գործառնական վերլուծությունը: Ժամանակակից պետությունը իմպլեմենտացնում է միջազգային նորմերն ու կանոնները, ինչը սահմանափակում է ավանդական պետական ինքնիշխանությունը և միաժամանակ հնարավորություն է տալիս ձեռք բերել միջազգային հանրույթի անդամ-պետության նոր գործառույթներ՝ պետական ազդեցությունը ընդլայնելով ներքին և արտաքին քաղաքական խնդիրների լուծման ոլորտում:

Սառը պատերազմից հետո գլոբալ տնտեսության ինստիտուտները, միջազգային կազմակերպությունները և ռեժիմները սահմանափակեցին պետության ինքնուրույն գործունեությունը: Գլոբալ տնտեսությունում պետական մասնակցությունը հանգեցնում է առևտրային տիպի պետության ձևավորմանը, որը իր հզորությունը չափում է համաշխարհային տնտեսական ռեսուրսների մասնաբաժնով, այլ ոչ տարածքային մասշտաբներով կամ ռազմական ուժով: Առևտրային պետությունները իրենց ռեսուրսների մեծ մասը ուղղում են նոր ապրանքների մշակմանը, արտադրությանը և միջազգային շուկայում նոր դիրքերի գրավմանը: Առևտրային պետությունը շահագրգիռ է գործընկեր-պետությունների տնտեսական բարեկեցության աջակցման մեջ, քանի որ անմիջական ներդրումներ է կատարում վերջիններիս տնտեսության մեջ: Առևտրային պետությունների փոխադարձ կախվածության աճը ուղեկցվում է տնտեսական հզորության համաձայն՝ պետական անհավասարության առաջացմամբ: Հետինդուստրալ հիմքերով զարգացող պետությունները ձևավորում են փակ համակարգ, այն դեպքում երբ ինդուստրալ և մի-

www.ardaradatutyunjournal.com

ջինդուստրալ երկրները հայտնվում են այդ համակարգից կախվածության վիճակում:

Եզրակացություն

Գլոբալացումը, որպես տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և իրավական համաշխարհային գործընթաց, խթանում է պետությունների ինտեգրումը, համագործակցությունը և զարգացմանն ուղղված նոր հնարավորություններ ստեղծում: Միևնույն ժամանակ, գլոբալացման ընթացքը առաջացնում է նոր մարտահրավերներ, որոնցից ամենակարևորն է պետությունների ինքնիշխանության որոշակի սահմանափակումը՝ ներառելով քաղաքական, տնտեսական և իրավական ոլորտները: Այս համատեքստում փոքր և թերզարգացած պետություններին անհրաժեշտ է վարել ողջախոհ և ճկուն քաղաքականություն՝ գլոբալացման և աշխարհաքաղաքական անկայուն պայմաններում՝ խնայելով և պաշտպանելով իրենց ինքնիշխան իրավունքները, հնարավորինս արդյունավետորեն հարմարվելով միջազգային նորմերին ու գործընկերների հետ փոխադարձ հարաբերություններին: Նման ռազմավարությունը ոչ միայն թույլ է տալիս պահպանել ազգային շահերը, այլև հնարավորություն է տալիս առավել արդյունավետ ինտեգրվել համաշխարհային գործընթացներին, ստանալ տնտեսական և քաղաքական առևտրային հնարավորություններ և ապահովել կայունության ու երկարաժամկետ զարգացման անհրաժեշտ հիմքեր:

---

[1] Մանրամասն տե՛ս Марченко М.Н. Государство и право в условиях глобализации.М., 2008.
[2] Տե՛ս Spykirian N.J. American Strategy In Worldpolitik: The United States and the Balarce of Power: NY, 1994, էջ 18.
[3] Տե՛ս Donnelly J. Realism and International relations. Cambridge, 2000. Էջ 12.
[4] Տե՛ս Ohmae K. The End of the nation State. L., 1998. Էջ 12.
[5] Տե՛ս Reinicke W. H. Global public Plicy // “Foreign affairs Wash, 1997. V. 76. № 6.էջ 129.
[6] Տե՛ս Государство и общество в условиях глобализации. Взгляд слева / Под ред. А. А. Галкина. М. 2003.
[7] Տե՛ս Керимов Д. А. Методология права. Предмет, функции, проблемы философии прав 2- М М. 2001 С. 239,
[8] Տե՛ս Ham van P. Can institutions Hold Europe Together? // In. Mall H. end. Redefining Europe: New Patterns of Conflict and Cooperation. London, 1994. Էջ 190.
[9] Տե՛ս Rosecrance R. The Rise of the Trading State: Commerce and Conquest in the Modem Wold. NY 1986, էջ 160.
[10] Տե՛ս Ruggie J. G. International Regimes, Transactions and Change: Embedded liberalism in the Postwar Economic Order// Krasner S. ed. International Regimes. Ithaca, 1983. Էջ 202.
[11] Տե՛ս Керимов А.Д. Современное государство. Вопросы теории.М., 2007.
[12] Տե՛ս Putanm R. Two-Level Games: The Impact of Domestic Politics on Transatlantic Bargaining // In Haftenadrom H. And Tuschhoff C. eds. America and Eurore in an Era of Change. Boulder, 1993. էջ 77.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Марченко М.Н. Государство и право в условиях глобализации.М., 2008.
2. Керимов Д.А. Методология права. М., 2001.
3. Луковская Д.И. Политические и правовые учения: историко-теоретический аспект.Л. 1985.
4. Государство и общество в условиях глобализации. Взгляд слева.Под.ред. А.А. Галкина.М., 2003.
5. Керимов А.Д. Современное государство.Вопросы теории.М., 2007.
6. Donnelly J. Realism and International relations. Cambridge.2000.
7. Ohmac K. The End of the nation State. L. 1998.
8. Reinicke W.H. Global public Policy// Foreign affairs Wash. 1997.
9. Ham van P. Can institutions Holg Europe Together?// in. Mall H. end: Redefining Europe: New Patternes of Conflict and Cooperatioan L. 1994.
10. Posecrance R. The Rise of the Trading Statae. Commerce and Conuest in the Modern World. N.Y. 1986.
11. Cable V. Key Trands in the European Economyand Future Scenarios in Mall, ed, Redefining Europe. №24:
12. Putanm R. Two-Level Games: The Impact of Domestic Politics on Transatlantic Bargaining // In Haftenadrom H. And Tuschhoff C. eds. America and Eurore in an Era of Change. Boulder, 1993. էջ 77.

Давит Сароян
Старший следователь по особо важным делам Управления по расследованию преступлений против личности Главного управления по особо важным делам Следственного комитета РА, советник юстиции 2-го класса,
Соискатель Института философии, социологии и права НАН РА,
Преподаватель кафедры частного и публичного права Института права и международных отношений “Ереванский университет “Айбусак”.

РЕЗЮМЕ
Глобализация и современные вызовы национального государства

В данной научной статье автор всесторонне исследует и анализирует актуальные проблемы, связанные с глобализацией и национальным государством.

Процесс глобализации представляет собой многослойное и объективное явление, обусловленное углублением экономических, политических и социокультурных взаимосвязей в мировой системе. Он формирует новый уровень взаимозависимости между государствами, способствуя расширению международного сотрудничества, но одновременно создавая серьёзные вызовы для национального государства.

Анализ показывает, что глобализация оказывает двойное влияние: с одной стороны, она стимулирует экономический рост, технологическое развитие и институциональное обновление; с другой - ограничивает классическое понимание государственной суверенности. В частности, рост влияния международных организаций, наднациональных структур и глобальных рынков приводит к относительному снижению государственного автономизма.

В теоретической плоскости выделяются два основных подхода - реалистический и институционалистский. Реалисты утверждают, что государство продолжает оставаться ключевым актором международных отношений, руководствуясь собственными интересами и логикой сохранения власти. В противоположность этому институционалисты подчеркивают растущую роль наднациональных институтов и трансформацию функций национального государства в глобальной системе управления.

Однако более полное представление дает системно-функциональный подход, согласно которому государство не исчезает, а адаптируется к новым условиям, переосмысливая свои функции. Современное государство постепенно превращается в ‚торговое государство‛, приоритеты которого смещаются от военной мощи к экономической эффективности, развитию международной торговли и конкурентоспособности на глобальных рынках.

Одновременно глобализация углубляет неравенство между государствами, обусловленное различиями в экономическом потенциале, технологическом развитии и уровне международной интеграции. В результате формируется поляризованная система, в которой развитые государства получают преимущества, а развивающиеся страны часто оказываются в положении зависимости.

Таким образом, глобализация не уничтожает национальное государство, а изменяет его характер и роль. Она создаёт как возможности для развития, так и риски ограничения суверенитета, что требует сбалансированной и стратегической государственной политики.

Ключевые слова: глобализация, международное сотрудничество, суверенные права, государственный суверенитет, ограничения суверенитета, права человека.

Davit Saroyan
Senior Investigator for Especially Important Cases, Department for Investigation of Crimes Against the Person, Main Department for Especially Important Cases, Investigative Committee of RA, Justice Advisor, 2nd Class,
PHD Candidate, Institute of Philosophy, Sociology and Law, NAS RA,
Lecturer at the Department of Private and Public Law, Institute of Law and International Relations, Yerevan “Haybusak” University.

SUMMARY
Globalization and contemporary challenges of the national state

In this scientific article, the author comprehensively examines and analyzes the current issues related to globalization and the national state.

The process of globalization is a multi-layered and objective phenomenon, driven by the deepening of economic, political, and socio-cultural interconnections in the global system. It establishes a new level of interdependence among states, facilitating the expansion of international cooperation, while simultaneously creating significant challenges for the national state.

The analysis demonstrates that globalization has a dual effect: on one hand, it promotes economic growth, technological advancement, and institutional modernization; on the other hand, it constrains the classical understanding of state sovereignty. In particular, the growing influence of international organizations, supranational structures, and global markets leads to a relative reduction in state autonomy.

Theoretically, two main approaches are distinguished - realist and institutionalist. Realists argue that the state continues to be a key actor in international relations, guided by its own interests and the logic of maintaining power. In contrast, institutionalists emphasize the increasing role of supranational institutions and the transformation of national state functions within the global governance system.

However, a more comprehensive understanding is provided by the system-functional approach, according to which the state does not disappear but adapts to new conditions by reinterpreting its functions. The modern state gradually evolves into a "trading state," whose priorities shift from military power toward economic efficiency, the development of international trade, and competitiveness in global markets.

At the same time, globalization deepens inequalities between states, driven by differences in economic capacity, technological development, and levels of international integration. As a result, a polarized system emerges, where developed states gain advantages, while developing countries often remain in a position of dependency.

Thus, globalization does not eliminate the national state but transforms its nature and role. It creates both opportunities for development and risks of sovereignty limitation, which requires a balanced and strategic state policy.

Key words: globalization, international cooperation, sovereign rights, state sovereignty, limitations of sovereignty, human rights.

Ընագիրը ներկայացվել է 04.03.2026թ.
Ընդունվել է տպագրության 27.03.26թ.